



Դպրոցները . — Մեր տարեթուի 600-ից մինչև 1600-ը ճապոնը բուզպայականութեան էր հետեւում . այդ ազգեցուցութիւնը ճապոնի մտաւոր ամբողջ կեանքին վրայ թողեց իւր ազգեցուցութիւնը : Բացի այդ , կոնֆուկիոսի վարդապետութիւնը եւս անձանօթ չէր հոն : Վերջինս տասնեւեօթերորդ դարուց սկսած աւելի եւս զօրեղ ներգործել սկսաւ :

Մինչև ասանեւիններորդ դարու առաջին կէսը այս երկու բնորոշ գծերը հանդէս են գալիս ճապոնի մանաւանդ մտաւոր կեանքում :

Այս հովերով սնուած ուսուցիչը ի՞նչ կարող էր սովորեցնել ճապոնցի աշակերտին — մտքի կաշկանդումն , « բարոյական » ծայրայեղ հպատակութիւն վարժապետից սկսեալ մինչև աստուածներին . ապա նաև , մի քանի մանր մունր առօրեայ գիտելիքներ :

Ներդրական մտքի ու կեանքի հետ հաղորդակցութիւն անելն արգիւռւած էր խստիւ : Սակայն եւ այնպէս կային անհատներ որ նակասակի եւ այլուր ցրուած հոլլանտական սակաւաթիւ գաղութներին հետ շփուելու յանդգնութիւնն ունէին : Այսպեղից՝ նոր լեզուի ու հայեացքի էին ծանօթանում : Տարտրաղգարար այդպիսիներին թիւը ոչ միայն քիչ էր , այլ եւ եզոզներն էլ խիստ խոզարկութիւններից յետոյ մարող ասաղեր էին լինում :

Տիրացուական այս սխտեմը շարունակեց իւր ընթացքը , մինչև որ 1868-ի յեղափոխութեան արշալոյսը ծագեցաւ : Իսկ արդէն 1872-ին հրատարակուած պաշտօնական հրովարտակը պարզ ու գեղեցիկ տողերով բացատրեց , որ ուսման հին ձևն անպէտք էր , պէտք էր նոր ճանապարհով յառաջ գնալ , բացատրեց թէ ո՞րքան աղէտներ են ծագում աղիւսութիւնից եւ այլն եւ այլն :

Այդ հրովարտակը բոլորին , առանց սեռի խտրութեան պարտաւորեցնում է գոնէ տարրական ուսում , որ երախային պէտք է աւանդուի 6-14 տարեկան հասակումը :

Այն անթիւ ոչ միայն ամէն տեսակ միջոցներ ձեռք աւնուելով բազմաթիւ դպրոցներ բացին , այլ եւ ամենախիստ հակողութեան տակ զըրուակեցաւ դպրոցից բացակայ չի գտնուիլը կամ ուրիշ զանցառումներ : Շուտով , այն ճապոնը , որ 1874-ին հազիւ մէկ ու կէս միլիոն աշակերտ ունէր , 1901-ին արդէն մօտաւորապէս չորս ու կէս միլիոնի էր հասած այդ թիւը : Նւ այսօր գոնէ տարրական ուսումը ապահովուած է : Ինչպէս գիւղերում , առանց բացառութեան , կարելի է տեսնել գոնէ նախնա-

կարգ ուսու մնարաններ . իսկ ասաններում եւ քաղաքներում նաեւ միջ-
նակարգ եւ մասնագիտական դպրոցներ :

Բարձրագոյն կրթարաններից ուշադրութեան արժանի են Տօկիօյի
կայսերական եւ Կիօտօյի նորարաց համալսարանները : 1901-ին Տօկիօ-
յում բացուեցաւ նաեւ մի ուրիշ համալսարան՝ լոկ իրական սեռին հա-
մար : Ընդամէնը 28,500 դպրոց կայ Ճապոնում այսօր . ասոնց մեծ մասը
հանրային է , միայն փոքրամասնութիւնը՝ կողմնակի անհատների :

Ուսուցիչները բաղկացած են գլխաւորապէս բնիկներից եւ ապա
նաեւ օտարներից : Սակայն շատ շնչեղձ՝ բոլոր ամպրոնները , բացի
թերեւս լեզուական դասերից , մնալու են տեղական պատրաստուող ու-
սիւնի :

Այս դպրոցների տուած արգասիքներին գալով՝ եթէ նկատի ունե-
նանք հին Ճապոնի մտաւորը , այսօր շատ ու շատ յառաջադիմած կը գըտ-
նենք . բայց եթէ համեմատենք եւրոպական ուսումնարանների արդիւնք-
ներին հետ , բնականաբար Ճապոնը դեռ հետու է , դեռ շատ աշխատանք
ունի թափելու , որպէս զի կարողանայ մտաւոր նոյն բարձրութեանը
հասնիլ :

Սակայն այդ ունի իւր յարկելի պատճառները , որոնց վրայ քիչ
դանդաղելով ընթերցողն աւելի հեշտութեամբ կը մտնէ խնդիրը :

Նախ՝ նաեւ այս դէպքում նիւթականը մեծ դեր է խաղում . ուսու-
ցիչները չափազանց անբաւարար են վճարուած . դպրոցների վրայ ծախ-
սուած դրամը դեռ շատ քիչ է՝ համեմատած կարիքին հետ : Նախնական
կրթութեան վրայ ծախսուում է տարեկան 75 միլիոն ֆրանկ . այդ շատ
քիչ է . սակայն եթէ յիշենք , որ գեո 1874-ին միայն 8 միլիոն էին
ծախսում , ապա կրմանանք խոշոր տարբերութիւնը եւ ապագայի ըն-
թացքը :

Մի բան սակայն մոռանալու չէ . ժողովուրդը եւ աէրութիւնը մա-
նաւանդ՝ ամէն ջանք գործ է դնում դպրոցների բարգաւաճման համար :
Տարեկան որոշ եւ խոշոր գումար սալուց զատ , չինական պատերազմից
ստացուած սուգանք քսան եւ հինգ ու կէս միլիոն ֆրանկը ամբողջովին
յասկացրեց կրթական գործին : Ներկայումս էլ հարց կայ , որ քսան
միլիոն ֆրանկ վերցուի եւ յասկացուի գուռ ժողովրդական կրթութեա-
նը . այսինքն կարելի չափով բարւոքուի ուսուցիչների առճիկները ,
աւելի շատ աշակերտ ընդունուի մասնագիտական դպրոցները , ուսում-
նական հաստատութեանց ֆիզիքականը բարեփոխուի եւ այլն :

Բանւորական շատ ծանր հարցից յետոյ , կրթական հարցը եւս
Ճապոնի օրուայ կարեւոր խնդիրներից մէկն է իրաւացի կերպով . ասոր
լուծման որպիսութիւնը մեծ նշանակութիւն ունի Ճապոնի ապագային
համար :

Բացի նիւթական խոչերից , կան եւ այլ արգելառիթներ , որ ճա-

պոնցի պատանին դ'ու ևս հետու է եւրոպական դպրոցից դուրս եկած ուսանողին հետ մրցելուց :

Եթէ մի ժողովուրդ ամբողջ պարեր թմբած է մեծացել , ապա նոյն իսկ ամենասթափիչ զարթումն անգամ բաւական չէ անցեալի թողած բազառական հետքը անմիջապէս ջնջելու : Ինչպէս յայտնի է , երեսուն տարին զեռ բաւական չէ ժառանգական ուժեղ ազդեցութիւնը ջնջելու . հետեւաբար բացի նիւթականից , ժառանգական խնդիրը եւս այս գէպրում մեծ նշանակութիւն ունի : Ասիայն անդուլ գործող անհատներն եւ հասարակութեանց համար ժամանակը շուտով սահում է եւ աշխատաւորներէ ճակատները պակնկերով զարգարում :

Կրթական գործի արագ քայլերը դանդաղեցնող պատճառներից մէկն էլ այն է , որ ճարտնական այբուբէնը , ինչպէս եւ չիտականը , ոչ թէ ձայնական է , այլ գողպիտրական , պատկերական . այսինքն իւրաքանչիւր նշան ունի առանձին եւ զբեթէ լսկ մի իմաստ , հետեւաբար որչափ առաւելայ , այնչափ էլ նշան : Այսպիսով երախան պարտաւորուած է յիշողութիւնը բռնադատել շատ բան ամփոփելու . մի բան , որ կարող է մեծ հարուած հասցնել մատղայ մաքերին : Կերկայումս , բարերազգաբար , սովորելի բասերի թիւը , խոհեմ քննութիւններից յետոյ , իջեցրած են երեք հազար ընտրովի բասերի . ասոնցմով երախան կարող է ազատ արտայայտել իւր մաքերը , եւ յետոյ այդ պաշարը անդալաբար հարստանում է տարիքին սեման հետ գուզընթաց , առանց ժամանուոր մեծ ջանք թողելու :

Ոմանք խնդրի աւելի խորը խափանցելով , աստջարկում են իրաւացի կերպով , որ խոպաւ վերացուի այդ հին ձեւը եւ փոխարէնն ընդունուի լատինական այբուբէնը . սրանք փաստում են , որ այդպիսով երախան շուտով կարգալ գրել կը կարողանայ սովորել , իսկ անասած ժամանակը կարող է գործ գնել ընդհանուր դարպացում ձեռք բերելու վրայ : Այս կուտակցութեան հակաուկորդները առարկում են , թէ այդպիսով կը զրկուին ազգային սրտ , ինքնուրոյն մի աւանդից : Ըստ իս , այդ առարկութիւնն անաւղի է , որովհետեւ ճապոնցի լեզուագէտը միշտ կը կարողանայ ապագայում գիտնական տեսակէտից ուսումնասիրել միայն գիւտններում այհուած այդ գրերը , որ գործածութիւնից ընկնելով , չի նշանակէ , թէ կը կորսուին : Անաւղի է նոյնպէս այն կարծիքը թէ այդ հին տաւերը շատ դեղեցիկ են իրենց արտաքինով , քանի որ իրենց գծուարութեանց հետ միասին երախայի երեւակայութիւնը զարգացնում են , սերիչ խօսքով , եթէ երաժշտական ընդունակութիւնները խափանում են , միւս կողմից էլ նկարչականը զարգացնում : Այդ շատ ճիշդ է , թերեւս այդ բանն է պատճառը , որ նապելի սլորումներով զարգանկարչութիւնը ձապոնի մեծ ընդունակութիւններից միսն է : Ասածներիցս հետեւեցաւ , որ գրերն հին կերպը նոյաւստում է լսկ պեզասէր ճա-

չակին . այդ լաւ . սակայն մոռնալու չէ , որ խելօք դաստիարակու թեան մէջ գեղարուեստը թէեւ անհրաժեշտ է , բայց պէտք է բռնէ շատ ու շատ երկրորդական տեղ . նախ պէտք է մեր կեանքը բնութեան եւ պարագաներին դիմադրելու պատրաստենք , եւ ապա գեղարուեստի մասին հոգանք իւր հերթին , որով աւելի եւս լաւ ու լայնօրէն կարելի կը լինի ըմբռնել նաեւ գեղարուեստը :

Ուսման եւ դաստիարակութեան արագ յառաջխաղացումն արդիւոյ պատճառներէից վերջինն էլ այն էր , որ երբ Ճապոնը զարթեցաւ , տե՛նչալի աչքերը դարձրեց դէպի արեւմուտք , ուզեց դրկել եւրոպական քաղաքակրթութիւնը հիացած , առանց որոշ եւ համոզուած խորութեան : Սակայն շուտով փորձերից հրաժարուած զգաց , թէ ամէն ինչ , որ Եւրոպայից է , ճիշդ ու գեղեցիկ չէ . սկսաւ մի նահանջ . նորից կոնֆիւկիոսի վարդապետութիւնը մտաւ , նորից չին եւ ճապոն մտաւոր հին դիւանները խուզարկուեցան : Բայց շատ շանցած նորից սկսան արեւմտեան քաղաքակրթութեան վրայ հիանալ , սակայն քիչ աւելի փորձառու դարձած : Վերջապէս խնդիրն այն է , որ 1868-ից ցարդ անշեղօրէն դէպի որոշ եւ անսայթաք նպատակի չի գիմեց . պատահեցան մոլորումներ եւ վերագործեր :

Այժմ , զգալի կորուստներէից յետոյ , գոնէ հաստատապէս գիտեն , թէ ի՛նչ են արել եւ այսուհետեւ ինչպէս են շարունակելու :

Ճապոնի մասին եղած եւրոպական հրատարակութիւններից ոմանք մեծ խստութեամբ քարկոծում են Ճապոնի դաստիարակութեան մէջ աչքի դարնող այն գիծը , թէ թթու հայրենասիրութիւն են քարոզում ուսումնարանների մէջ : Ճիշդ է , եւ եւս համամիտ չեմ , որ ճապոնցի ուսուցիչները չափազանցութեան հասցնելով սովորեցնեն մանուկներին , թէ Ճապոնը աշխարհի ամենաընտիր երկիրն է ըստ ամենայնի , սակայն եթէ նկատի ունենանք , որ Ճապոնը Ասիայում մեծ գործեր ունի կատարելիք եւ մինչեւ իսկ ստիպուած է (օրինակ՝ երկրի փոքրութիւնը հետզհետէ անհրաժեշտ կարիք է դարձնում մտածել նոր գաղութներ հիմնելու մասին) , ապա մասամբ աւելի ճիշդ կը հասկանանք այդ ուղղութիւնը . երկրորդ՝ ո՞ր երկիրն է արդեօք նոյն իսկ Եւրոպայում , որ այսպէս թէ այնպէս թթու հայրենասէր չէ դաստիարակութեան մէջ . . .

Հողագործութիւնը : — Պարապմունքի տեսակէտից նախ եւ առաջ հողագործ է դեռ Ճապոնը , քանի որ 45 միլիոնի չափ այս մողովրդի կէսը՝ գրեթէ ապրում է հողի միջոցաւ : Եւ ո՞րչափ է այդ հողը .

380,000 քառակուսի քիլօմէթրից բաղկացած երկրի հազիւ մի տասներորդ մասը . իսկ այդ մասն էլ ոչ խիստ պտղաբեր . բայց այդ դեռ չեք իմացել . բլուրների , լեռների , հեղեղների , փոթորիկների , երկրաշարժների , հրգեհների ու ճահիճների աւերումներն ու անյարմարութիւններն էլ անպակաս են :

Այժմ արդէն զարմանալի չի լինի , եթէ ասեմ , որ իւրաքանչիւր մի քիւովեթր մշակելի հողի վրայ ապրում են հարիւր տասն եւ հինգ հոգի , իսկ պաղաւէտ վայրերում մինչեւ երեք հարիւր հոգի : Այստեղից հետեւելի է , որ Ճապոնը ազգաս պիտի լինէր սկզբից 'ի վեր , եւ աղքատ էլ կը մնայ , եթէ հողագործութիւնը ամենակատարեայ ընթացքով յառաջ չի տանէ . իւր բոլոր կարելի ճիւղերը , եթէ առեւտրական մեծ ու նոր աղբիւրներ չի բանայ , ինչպէս սր սկսած է , կամ եթէ մեծ ու հարուստ գաղութներ չի հիմնէ :

Եթէ ո եւ է երկիր նութապէս աղքատ է , նա չի կարող նաեւ միջոցներ ունենալ երկրագործական ամէն նոր յարմարութիւնից օգտուելու . ասոր վրայ աւելացնենք նաեւ այն , որ Ճապոնի հողը բաժանուած լինելով բազմաթիւ փոքր կտորների , անկարելի է դարձնում մեծ ու նոր ձեռնարկութիւններ : Ընչոք է . բացի փոքրահող անթիւ կալուածատէրերից կան նաեւ մեծակալուած հողատէրեր , սակայն մոռնալու չէ , որ Ճապոնը դեռ գտնուում է իւր վերածննդեան առաջին կամ երկրորդ քայլափոխում . հետեւաբար հին 'իւսնքը դեռ եւս որոշ ժամանակ կը շարունակէ իւր սովորութիւններով գոյութիւն ունենալ : Օրինակ՝ դեռ ցարդ մեծ կալուածատէրերը իրենց հողը մաս մաս բաժանած տալիս են վարձով՝ բազմաթիւ մարդկանց . սրանք էլ արդէն երկար տարիներ մշակելով երկրի որոշ կտորը , կապուած են այդ հողին հետ գոնէ երկրորդական տիրոջ պէս . սնուցած են այդ հողի վրայ սրբազան ծառեր , որ սերնդէ սերունդ ժառանգուելով , հետզհետէ աւելի են դժուարացնում իրենց մշակած հողից բաժանուելը , բացի այն , որ այդ հողն է նրանց ապրուստի միակ աղբիւրը : Հետեւաբար նոյն իսկ մեծահող կալուածատէրերը չեն կարող մի նոր եւ անմիջական գործ սկսել , քանի որ վարձատուներ իրենց կամքը եւ հաշիւներն էլ դեռ որոշ եւ բաւակաւն մեծ դեր են կատարում :

Սակայն եւ այնպէս , չի նայած այս բոլորին , հողագործութիւնը Ճապոնում ամէն տարի աւելի յառաջ է գնում , ամէն ջանք գործ է զբրւում անվհատ , որ մշակութեան նոր եղանակներ ներմուծուին , դեռ շատ չէ անցած այն օրից , երբ շոգիմիլիոնայ հսկայ ջրհաններով ընդարձակ ճահիճներ ցամաքեցրին . եւ այդ դեռ նոր չորցած հողերից հազար հեկտարի վրայ ցանուած բրինձից լոկ մի տարում տապալան քառասունը հինգ հազար հեկտարի տար բրինձ . սակայն դեռ շատ դափնիներ կան ստանալիք :

Եթէ վերոյիշեալ դասակարգերից ոչ մինը ոչ էլ միւսը չեն կարող մի նոր եւ արմատական փոփոխութիւն մտցնել հողի մշակման հին եղանակին մէջ , ապա , ինչպէս ոմանք միամտաբար կարծում են , Ճապոնի կառավարութիւնը կարող է այդ յառաջադէմ քայլն էլ անել տալ , եթէ սնձամբ կանգնի ընդհանուր պործի գլուխը . բայց ինձ թւում է , որ

կառավարութիւնը . թէեւ շատ գովելի եւ նոյն իսկ չի հաւատալու չափ մեծ քանքեր է անում երկրի ամէն կարգի բարօրութեանը համար , սակայն այս գէւղքում այն եւս անկարող է մեծ յեղափոխութիւն մտցնել : Երբ ասում ենք , որ եւ է տէրութիւն ոյժ ունի , հասկանում ենք նոյն երկրի ժողովրդի կամ անհատների կարողութիւնը , հետեւաբար եթէ ժողովուրդը դեռ աղքատ է եւ հակառակող , տէրութիւնը տակաւին ոչինչ նշանաւոր քայլ անել տալ չի կարող : Այս գէւղքում եւս արեւմտեան քաղաքակրթութիւնը հետզհետէ պէտք է որ պատրաստէ ճապոնացուն , իսպառ փոխէ ընկերական կազմը , եւ դաշառային մշակներին մոռցնել տալով հայրենի բանաստեղծական աւանդները , ստախճանաբար մոռցնել տայ հովիտներում մանգաղով հնձելը , որայ կապելը , լուսնին շողով հովուերգական լէ-լէներ կանչելը . այսպիսով մշակները կամաց կամաց կը կեղրոնանան գործարանական եւ վաճառականական ասպարէզներում . հլու լինելով կեանքի պայքարի այն անողոք պատգամին , թէ՛ ճգնիր մի կերպ շահիլ օրապահիկդ , ի՞նչ փոյթ թէ ասնակիս անես նոյն իսկ վսեմ զգացմունքներդ : Այդ պատգամը միայն պիտի կարողանայ հողի մշակութիւնը հասցնել իւր կատարելութեան դազաթնակէտին , կեղրոնացնելով հողը միայն սակաւաթիւ անհատների ձեռքի տակ . այդ միեւնոյն պատգամը միայն պիտի կործանէ հին մեթոսները , եւ եթէ այսօր ճապոնը գլխաւոր բերքերից ստանում է տարեկան ութն եւ կէս միլիոն լիտր բրինձ , մօտ հարիւր քսան միլիոն լիտր գարի , վերջինից քիչ աւելի հաճար , եւ մօտ ինն հարիւր յիսուն միլիոն լիտր ցորեն , նորանոր կատարելագործուած աշխատանքով կը կարողանայ աւելին ըստանալ :

Հին Ճապոնը գրեթէ չը գիտէր պաղատու ծառեր սնուցանել . բայց այսօր արդէն մանաւանդ խնձորն ու նարինջը մեծ քանակութեամբ մինչև իսկ արտահանում է օտար երկիրներ :

Իսկ ինչ վերաբերում է անասնաբուծութեան , նրանք շատ քիչ են զբաղուած այդ կարեւոր խնդրով : Ամբողջ երկրում հազիւ մէկ ու կէս միլիոն եղջիւրաւոր ընտանի կենդանի կայ , իսկ քիչ աւելի էլ ձի ունին : Ինչօ՞ւ . գարձեալ երկրի բնական աղքատութիւնն է ազոր պատճառ . երկիրը մեծ ու առատ արօտատեղիներ չունէր , որ բնականօրէն աճէին բազմաթիւ կենդանիներ : Իսկ արդէն ժողովուրդը մի անգամ չարքայ կեանքին վարժուելուց յետոյ , արդէն անտրտունջ կերպով . ոչ միայն օրն 'ի բուն աշխատում է , այլ եւ կատարում է մինչև իսկ ամենածանր ծառայութիւններն անգամ , եւ այսպիսով կենդանիներին գործունէրութեան վերջ դնում : Նրանք , ճապոնցիները թէեւ օւժեղ ու յաղթանգամ չեն , բայց պարզ ու իրաւացի պարծանքով ասում են , որ բնական ոյժի պակասը լրացնում են դիշերային եւ այլ պարապ ժամերի շահագործութեամբ :

Բայց ներկայումս կեանքի նորանոր պահանջները դրդում են նաև նրանց, որ մեծ խնամք տանին անասնաբուժութեան վրայ Ամենից առաջ՝ հեծելագործի բազմասնալը պահանջում է անթիւ ձիեր, ապա ապրելու եղանակներն փոխուելը կարիք է դարձնում խնամել խոզ ու այլ կենդանիներ, որպէս զի կարելի լինի երբեմն էլ մտղէն կերակուրներով զարդարել ցարդ աղբատ ընդհուկներով բուսականացած սեղսնները . մանաւանդ , խուզարկու ջանքերը ցոյց տուին , որ արօտատեղիներ ձեռք բերելն անհնար չէ :

Մի քանի սող առաջ ստացի , թէ ջանքեր են լինում նպաստելուց երկրագործութեան ծաղկումին : Մի կողմ թողնելով կառավարութեան առանձին հովանաւորութիւնը եւ կողմնակի մարդկանց ձեռնարկութիւնները , արժէ հոս մասնանիչ անել այն երկու ընկերութիւնները , որ այդ նպատակով հիմնուել են եւ արդէն մօտ կէս դարուց 'ի վեր գոյութիւն ունին : Այդ ընկերութիւններինց երկուսն էլ բարոյական գրեթէ միեւնոյն հիմունքների վրայ են հաստատուած , ուստի ես կը բաւականանամ անոնցինց էլ միայն մէկի ստուերադիժը տալով , ցոյց տալու համար 'ի միջի այլոց եւ այն , որ ոչ միայն ժողովրդի նիւթական շահին է նպաստում այդ , այլ եւ գործնական աստիճանաւորութեամբ ամէն մի անհատի մէջ բարոյական շատ վսեմ գաղափար է սերմանում , եւ այնչափ գեղեցիկ , որ կարծես ժուժկալութեան դաս սալ ուղած լինէր դրա հիմնադիրը , Նոնօիբան (ծն. 1787, մեռ. 1856) :

Այդ մեծ մարդը գործնական օրինակով իւր պարզ եւ մեծ գաղափարը քարոզեց եւ ցոյնեց իւր ունկնդիրներին մէջ եւ ահա իւր մահից յետոյ նրա հետեւորդները հեշտութեամբ հիմնեցին այդ ընկերութիւնը , որ ընդանրապէս յայտնի է հօսօկուշան անուանով : Ի՞նչ էր այդ բազմաձիւղ ընկերութեան պաշտօնական սկզբունքը . — ծաղկեցնել աւերակ եւ խուպան դաշտերը , վարձատրել արժանաւոր մշակին , օգնութիւն հասցնել վհատուած եւ խեղճ հողագործին . եւ բարոյական այս շէնքի սիւները հիմնուած են անսեսադիսութեան եւ չափաւորութեան քարոզի վրայ :

Մինչեւ անդամ եօթը հողի առանձին կերպով կարող են կազմել մի մասնաձիւղ , որը սակայն սովորաբար վախժուէն տարի գործելու ձգտումով է ձեռնարկելու գործը : Ի՞նչ հակառակ պարագային , եթէ աւելի շուտ քայքայուի , իւր ամբողջ լինչքը պիտի յանձնէ կեդրոնական մարմին :

Ընկերութեան մասնակցելու իրաւունք ունին բոլոր չափահասները , հերթ է որ չը լինին ամբարիշտ , չը լինին արքայական տան թշնամի , եւ՝ հասակէր . այսինքն՝ նա , որ չուզէ իւր կարեւոր պիտոյքինց աւելի ունեցած դրամը դնել ընկերութեան արամոցրութեան տակ , այնպիսին չի կարող մասնակցիլ :

Իւրաքանչիւր մասնաձիւղ անհրաժեշտօրէն ունի մի նախագահ ,

փոխնախագահ, գործառնար մարմին, սրա նախագահը, վերատեսուչներ
եւ քօնֆէրանսներ կազմողներ :

Իւրաքանչիւր մասնածիւղ ունի զարնանային եւ աշնանային երկու
ընդհանուր ժողովներ : Անդամները երկու տարին մի անգամ են ընտրու-
ւում, անթողակ են :

Փոխ դրամ տալ կարելի է թէ որոշ խմբի եւ թէ անհատների . մի-
այն թէ պէտք է գոնէ երկու տարբեր անհատներ երաշխաւոր դրուին .
իսկ պարտքը յետոյ կարելի է մաս մաս վճարել առանց տոկոսի .
պարտագանը, եթէ ցանկայ կարող է մի որոշ կամաւոր նուէր էլ սալ,
պարտքը վճարելուց յետոյ :

Որպէս զի ամէն անհատ կարողանայ տեղեկանալ այս ընկերութեանց
նպատակներին, եւ, կարիքի բոլորն օգտուի, ընկերութիւնը երկրի
ամենախուլ անկիւններում միշտ քօնֆէրանսներ է կազմակերպել տալիս,
որտեղ պարզ ու հասկանալի կերպով համոզում են ռամիկ ժողովուրդը՝
միանալու եւ կազմելու համամասն ընկերութեան մասնածիւղեր :

Գալով ընկերութեան նիւթական միջոցներին, ազոնք ստացում
են կալուածներինց . այդ կալուածները ճանաչուած են տէրութեան կող-
մից իբր ընկերութեան յարատեւութիւնը պահպանող անկաղտպանի հո-
ղեր : Բացի այս, ունին մի կարեւոր դրամագլուխ, որ անխախտ մնում
է, միշտ շահ բերելով . վերջապէս ունին նաեւ առձեռն գործածուող մի
դրամագլուխ :

Հասոյթ կամ նպաստ տալ կարող է ամէն ոք, նաեւ անդամները,
եւ մանաւանդ ընկերութեան բարիքը վայելողները :

Իսկ որոշ անհատներ կարող են հինգ տոկոսով դրամ սալ եւ ընկե-
րութիւնը կը դործածէ անվստանգ կերպով . ընկերութեան անդամների
մասնակի վճարներինց կազմուած դրամագլուխն արդէն անսովոր է, մի-
այն թէ, երբ անգամը դուրս գալ ուղէ գործինց, կարող է իւր ստակն
ամբողջովին յետ ստանալ նորինց :

Սակայն այս բոլորն էլ որչափ գեղեցիկ լինին, որչափ էլ որ եր-
կիրը մեծ բարիքներ է վայելում այդ ընկերութեանց շնորհիւ, դարձեալ
դեռ բաւական չէ այդ . կարիքը շատ մեծ է . բարեբաղդաբար ճապոն-
ցիները զգում են այդ եւ միշտ աւելի մեծ ջանքով են յառաջ գիմում
տեղեկային շարժումով, ապագայի վստ արշալոյսների հեռանկար շողերը
նրանց յամառօրէն կանչում է միշտ ու միշտ :

Արտարարութիւնները . — Դեռ քառորդ դար առաջ դործարանական
կեանքի մասին զաղափար անգամ չունէր ճապոնը : Երկրի ամէն կող-
մում տարածուած էին բազմամիլ աշխատանոցներ, ուր պատրաստում
էին ոչ միայն գեղարուեստական իրեղէններ, այլ եւ առօրեայ կեանքին
պատկանող ամէն ինչ, որ կարելի էր սպասել Ասիայի կղզիացած եւ
խաւար այդ անկիւնինց : Բայց այժմ արդէն երկրի բոլոր մասերում էլ

սկսած են միալ գործարանների վիթխարի ծխաններ այնպէս, ինչպէս արեւմտեան ամենազարգացած երկիրներում :

Բայց ինչ վերաբերում է ճոխութեան եւ զարդարանքի առարկաներին, նոյն են մնացել ինչպէս որ էին, այսինքն՝ դարձեալ մասնաւոր, սակաւաթիւ բանւորներով աշխատանոցների մէջ են պատրաստւում յաւաւապակեայ հրաշալիքները, կամ մետաքսէ այն սքանչելի, ծաղկուն գործուածքները, որոնք Պարիսի 1900-ի յուցահանդէսին փայլում էին իրենց անմրցելի պերճութեամբ :

Այս շարքի աշխատանոցները, իբր ձեռագործ արտադրութեան կեդրոններ, միշտ էլ կը մնան միեւնոյն վիճակում բնականաբար, քանի որ գեղարուեստները շարքին են պատկանում այդ գործերը :

Գործարաններից ստացուած արդիւնքը կազմում է երկրի ամբողջ եկամուտի մէկ հինգերորդականը, բայց այդ եւս դեռ հերիք չէ, նրանք ձգտում են որ իսպառ անկախ լինին արեւմտաքից, թէեւ արդէն այժմ էլ ինքնուրոյն կերպով կարողանում են սպորտք արտահանել Չինաստան, Հնդկաստան, Անգլիա եւ մինչեւ Ամերիկա :

Ճապոնի արտահանութեանց մէջ մետաքսը մեծ տեղ է բռնում, 1893-ին այդ արդիւնքի գումարը հասնում էր եօթանասուն միլիոն ֆրանկի, բայց 1900-ին բարձրացաւ հարիւր տասը միլիոնի, իսկ 1901-ին՝ հարիւր ութսուն եւ հինգ միլիոնի :

Բամբակը, որ 1893ին ոչինչ չաւ չէր մտցնում դրսից ներս, արդէն 1901-ին յիսուն երեք միլիոն ֆրանկ աւելացրեց երկրի եկամուտի վրայ, Բացի սաւոր նաւերի Ճապոնում գնած եւ սպառած ածխից, 1901-ին Ճապոնը մօտ երեք միլիոն տակառաչափ քարածուխ է արտահանել, մի բան, որ անկասկածելի կերպով խոշոր հարուած է հասցնում արեւմտեան երկրների այդ շարքի վտճառականութեանը :

Դեռ 1898-ի հաշուեցուցակով երկու հազար ինը հարիւր տասը գործարան կար Ճապոնում, այսօր այդ թիւը շատ աւելի աճած է :

Մայրաքաղաքում եւ իւր շրջականերում կարելի է տեսնել բամբակէ եւ ալլ գործուածքների գործարաններ, լուցկու, ժամացոյցի, թղթի, քարաղիւսի, գլխարկների գործարաններ, հանքերի բազմաթիւ գտարաններ :

Ասոնցից իւրաքանչիւրը երեսունից սկսած մինչեւ հազարից աւելի գործաւոր ունի : Արդիւնաբերական կեանքը լայն ասպարէզ գտած է մանաւանդ Օսակայում, որն իրաւամբ Ճապոնի Մանչեսթր են անուանում : Այդ քաղաքում կայ մօտ երկու հազար գործարանական ծխան, հինգ հարիւր շոգեկաթսայ, չորս հարիւր յիսունի շափ հսկայ մեքենայ, որոնց ոյժը հասնում է ասաներեք հազար ձիու ամբողջական ուժին, 'ի միջի այլոց յիշեմ նաեւ, որ լճերի եւ ջրանոցների անսպառ գոյութիւնը մեծ յարմարութիւն է աւելիս ելեկտրականութիւնից օգտուելու ձեռնարկութիւններին :

Օսական իրակը չէ սակայն . նշանաւոր տեղ են բռնում նաեւ Կիւտոն , Իօզօհաման , Կօբէն եւ ուրիշները :

Որչափ էլ սակայն արտադրութեանց զանազան ճիւղերը ծաղկին հոն , դարձեալ ճապոնի ժառանգական արուեստը կը միայ բամբակեգործութիւնը . օրինակ Տօկիօյում այդ շարքի գործարաններից ոմանք մինչեւ չորս-հինգ հազար գործաւոր են զբաղեցնում , մինչեւ հազար ձիուամբողջական ոյժին հաւասար ոյժ ունեցող մեքենաներ են շարժում , անդլիական ամենակատարեալ գործարանների օրինակով շինուած այդ հաստատութեանց մէջ :

Սակայն գործարանական կեանքում կայ մի ուրիշ աչքի ընկնող քայլ , որ Ճապոնին մնում է դեռ անել . մետաղի հանքերի մշակումն է այդ : Ճարդ Անգլիոյ եւ Ամերիկայի երկաթից ու պողպատից են գործածում նրանք . մինչդեռ եթէ տեղական հանքերը կատարեալապէս մշակուին , միայն Կիուչիույի կայսերական պողպատահանքը տարեկան հարիւր հազար տակաւ պողպատ կարող է արտադրել :

Դժբաղդաբար երկաթի հանքերը հարուստ չեն . հանքերի այս երկու ճիւղը մեծ նշանակութիւն ունին գործարանական կեանքի յառաջացման խնդրում : Կան նաեւ պղնձի մշակող հանքեր :

Բայց ինչ վերաբերում է քարածուխի հանքերին , զարմանալի յառաջադիմութեամբ մշակած են երկրի առատ հանքերը . այսօր եօթն ու կէս միլիոն տակաւից աւելի քարածուխ է ստացում հոն . հսկայ հորերը ամենակատարեալ ձեւով են փորուած . թէև ընտիր յատկութիւններով օժտուած այդ ածուխի հանքերը խիստ ճոխ են , բայց հորերում լծացած ջրերի առատութիւնը մեծ դժուարութիւններ է յարուցանում . բայց եւ այնպէս մեծ տոկոսնութեամբ գործը յառաջ է գնում տրտանեան քայլերով :

Գործարանական կեանքի մասին խօսելիս արժէ այստեղ մի երկու տող էլ գրել չուցիւո զգործարանների մասին . որ այնքան մեծ տեղ են գրաւում Ճապոնում . այդ մասին մօտաւոր գալափար տալու համար բաւականանանք յիշտասակելով , թէ՛ 1889-ին մօտ հինգ միլիոն Ֆրանկի լուցկի էր պատրաստուած ընդ ամէնը , հինգ տարի յետոյ այդ թիւը հասաւ տասն ու կէս միլիոն Ֆրանկի . իսկ 1898-ին միայն օտար երկրներ արտահանածի արժէքը մօտ տասն եւ եօթը միլիոն Ֆրանկ էր , մոռնալու չէ նաեւ այն , որ ընտիր յատկութիւններով օժտուած այդ լուցկիներից երկու տուփը արժէ մէկ ամբողջ եւ մէկ չորրորդական սանթիմ միայն :

Գարեջուրը անպործածելի էր առաջ Ճապոնում . բայց այսօր առօրեայ անհրաժեշտութեանց շարքն է անցած արդէն , արտահանուում է մինչեւ անգամ յանի որ թէ աժան է եւ թէ ընտիր :

Միայն Օսականի մօտ գտնուած գործարաններից մէկը տարեկան երեսուներ վեց հազար հեկտոլիտր դարեջուր է արտադրում :

Ուշադրութեան արժանի են նաև սիգարէթները գործարանները որոնք ամերիկական, ամինականատարեալ օրինակների ձեւովն են շինուած . այդ սպրանքը եւս մեծ քանակութեամբ արտահանուած է Քորէա եւ մաւ նաւանդ Չինաստան :

Ճապոնը բաղկացած է կղզիներից , ուրեմն սեղացիները ու շաղրու-թիւնից չը պիտի խուսափէր նաև նաւայինութիւնը . եւ իրօք 1897-ին երեւեցաւ , որ ութսուն նորաչէն շոգնաւերից յիսուընը եթէր պատաս-տուած էր տեղական հանգրուաններում նակասակիւում արդէն մարտանաւ-ւեր եւ վեց հազար սակառաչափից մեծ նաւեր վաղուց շինել սկսած են . այսօր Ճապոնական նաւատորմիդը եթէ ոչ երրորդ դոնէ չորրորդ տեղն է բռնում Եւրոպայում :

Երեք հարիւր ութսունը երկու հազար քսուակուսի քիւմէթից բաղ-կացած Ճապոնը . ընէր 1902-ին ութը հազար հինգ հարիւր քիւմէթի երկաթուղային դիւ . այժմ այդ դժերը հեռզհեռէ աւելի պիտի աճին . քանի որ շնորհիւ նորբաց գործարանների , սեղացիները անկախ կա-րողանում են պատրաստել երկաթուղու վերաբերեալ ամէն մի առարկայ . որ առաջ ստանում էին Անգլիայից կամ Ամերիկայից* :

Եթէ Ճապոնի պաշտօնական հաշիւների ցանկը աչքից անցնենք , պիտի տեսնենք վաճառականութեան հետեւեալ քայլերը — 1868-ին Ճա-պոնը մօտաւորապէս վաթսուընը հինգ միլիոնի առեւտուր ունէր դրսի հետ . այդ թիւը բարձրացաւ հինգ հարիւր քսուասուն միլիոն Ֆրանկի 1889-ին . իսկ 1901-ին մինչեւ հազար երեք հարիւր միլիոն Ֆրանկի . կը նշանակէ երեսուն տարուայ մէջ տասն եւ վեց անգամ շատցաւ :

Մի Ֆրանսացի վերջերս նկատել էր թէ Ճապոնը իւր տենդային եղակի ընթացքով կամ իսպառ կընկնի հեկայական պարաքերի մատուե-լով սնանկացած , կամ կը դառնայ վաճառականական մի պատկառելի ոյժ ներկայացնող երկիր . ըստ իս այս վերջինը շատ աւելի նաւանական է , եթէ նկատի ունենանք այն արտակարգ շարժումը , որ յառաջ եկաւ ոչըն-չութիւնից եւ վաճառականական կամ քաղաքակրթական վախկոտ տեսու-թիւններից իսպառ աղատ ցոյց տուեց մի գեղեցիկ բաղառութիւն իսաւար Արեւելքում :

ԱՐՄԵՆԻԿ



* Փոստի , հեռագրի , հեռախօսի յարմարութիւնները մինչեւ իսկ կարող են անցնիլ եւրոպականիններից . նկատի ունենանք նաև , որ հեռագիրը եւ նամակը աւելի , շատ աւելի աժան ճանապարհածախս ու-նին , քան այլուր :